

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ
ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԳՈՒՄԱՐԻ ՀԻՆԳ ՏՈԿՈՍԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ
ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. «Հազարամյակի մարտահրավերներ Չայաստան» ՊՈԱԿ-ն կողմից հայտարարված «Արարատյան դաշտավայրի դրենաժային համակարգի վերականգնում» (փաթեթ-2) թիվ IA/CB/CW-08/010 ծածկագրով աշխատանքների կատարման մրցույթի պայմանով նախատեսված մասնակցության բանկային երաշխիք ներկայացնելու համար ս.թ. փետրվարի 18-ին «Արփա-Սևան» ԲԲԸ և «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ միջև կնքվել է՝ 150,000.00 ԱՄՆ դոլար (Մեկ հարյուր հիսուն հազար դոլար) բանկային երաշխիքի տրամադրման մասին թիվ M21341 լրացուցիչ համաձայնագիր: Ընկերությունը բանկային երաշխիք ստանալու և հաշվառելու դիմաց բանկին վճարում է կոմիսիոն վարձատրություն տարեկան 3.0 (երեք) տոկոսի հաշվարկով: Երաշխիքը գործողության մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև 30 հունիսի 2010թ.:

2. «Արփա-Սևան» ԲԲԸ և «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ միջև ս.թ. փետրվարի 18-ին կնքվել է վարկ տրամադրելու մասին թիվ 231017 լրացուցիչ համաձայնագիրը, համաձայն որի բանկը տրամադրում է ընկերությանը 89,000.00 ԱՄՆ դոլար (Ութսունինը հազար դոլար) կարճաժամկետ վարկ մինչև 19 ապրիլի 2010թ. ժամկետով, տարեկան 15% տոկոսադրույքով: Վարկը տրամադրվում է ընկերության կրեդիտորական պարտքերի և աշխատակիցների աշխատավարձի վճարման համար:

«Արփա-Սևան» ԲԲԸ

Տնօրեն՝

Պ. Հակոբյան

Կատարող Զ.Վարդանյան

հեռ. 26-11-90